

Մրցույթի հայտարարություն

ՀՀ Սյունիքի մարզի << Խնածախի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգի 2-րդ կետի համաձայն <<Քարաշենի միջն. դպրոց>> և <<Խնածախի միջն. դպրոց>> ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման մարմինը՝ միացյալ խորհուրդը հայտարարում է մրցույթ <<Խնածախի միջն. դպրոցի>> տնօրենի թափուր տեղն զբաղեցնելու համար:


1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝
 - 1/ ՀՀ քաղաքացիություն
 - 2/ Ուսումնական հաստատության կառավարման իրավունքը /հավաստագիր/
2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝
 - 1/ Դիմում հաստատության խորհրդի նախագահի անունով
 - 2/ ՀՀ քաղաքացու անձնագիր կամ նույնականացման քարտի պատճենը
 - 3/ Հաստատության ղեկավարման իրավունքի՝ հավաստագրի պատճենը
 - 4/ Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով
 - 5/ Ինքնակենսագրություն

Փաստաթղթերի պատճենը պետք է ներկայացնել բնօրինակի հետ:

Փաստաթղթերի ընդունվում են <<Խնածախի միջն. դպրոց>> ՊՈԱԿ-ում 2021 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2022 թվականի հունվարի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 15:30-ը, բացի հանգստյան /շաբաթ, կիրակի/ և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի հունվարի 25-ին ժամը 12:00-ին Խնածախի միջն. դպրոց ՊՈԱԿ-ում:

Տեղեկությունների համար դիմել՝ խորհրդի կողմից լիազորված անդամ՝ Նվեր Հայրապետյանին: Հեռ.՝ 077440933, էլ հասցե՝ khnatsakh@schools.am:

Դպրոցի խորհրդի նախ.  Ա. Մկրտչյան